

էսաց• — Պառւ՛ւ, դիւ իմ մօր տեղն իս, յընդիւց քի կըսիմ :

էսաց• — Դաւիթ, իս Յեօլանի կնկեան մեղք չըմ գնի•

Էն ժամանակ դիւ պատիկ էր•

Մկայ եղիւ իս քսան տարեկան, քսանընկնդ տարեկան•

Հալա ազապ մնացիւ իս :

Որ զքի տիննայ, խիւք կերթայ գլխիւց,

Կուզի դեայ, քիւ ծուց պառկի :

256. Է՛, պառաւ, պա ինչ էնիմ, կըսի Դաւիթ :

— Դաւիթ, դիւ էլ կնիկ մ՛ քի, փսակուի•

Վուր քի կնիկ ըլաւ, էլ մէ կնիկ չկէրի քի խակառ՝ ընկի•

Մկայ վուր քի կերչկայ, խիւք կերթայ :

Մարդ չը կէրի ջահէլ տղին ըսի• «Դիւ էսքան խօրօտ իս» :

Սօրա կերթայ եար կը բռնի :

257. Դաւիթ, իս յառէջ քի տ՛ ասէր, «Գնա՛, կնիկ քի :

Դաւիթ, սկնայ բան կայ ախշար, հա՛ :

Խօրոտ, քի յապեօլ, կնիկմ քի :

— Պառւ՛ւ, էսաց, ըծը յապեօլ կնիկ դիւ գնաի• իս չըմ
կէրի :

— Դաւիթ, էսաց, քի կեօրայի² կտրըճ կնիկ Խանաիւթ խա-
թիւն ի•

— Մարէ՛, ո՛ր տեղն ի Խանաիւթ խաթիւն, իս չըմ գիտի :

— Կեօ՛, Խոյա քեաղաք, Իրանայ խուղը մէջ :

Էնա քեանց զքի կտրիճ ի• քեանց քի խօրոտ ի :

258. — Մարէ՛, Խոյ ո՛ր թարաֆն ի :

էսաց• — Դաւիթ, խա խարցու Խլաթ, դինա՛•

Ո՛ր կերթաս Խլաթ, խարցու Արճիչ, գինա՛•

Ո՛ր կերթաս Արճէչ, խարցու Բերկրի, գինա՛•

Ո՛ր կերթաս Բերկրի, խարցու Աբաղէն, գինա՛•

Համա խարցուցելով, խարցուցելով գինա Խոյ :

259. Դաւիթ որ իկի յաղըըրի վերայ լուացուիւր է, խաց
չը կերիւր ի :

Կըլնը, կերթայ յիւր յեօգէն :

Մնաիւկ կը բանայ, շուրիւր կը խագնի :

Թուրն կը կապի յիւր վերայ•

Կգեայ ձին դիւս կը քեչի•

Կեամ՛ ձիու բերան կը գնի•

Ձին ձիու քեամկին կը դարկի•

Ոնչ խրեօխպօր խապար կէնի•

4 Հակառակ: 2 Թրք.— Հաւասար, չափ•